ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ε/40/137-25 առ «20» 01 2025թ.

«Արթուր Պողոսյան» ԱՁ
Ա. Պողոսյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-123/24-2-01/304 պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Պողոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության և «Արթուր Պողոսյան» ԱՁ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 19-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-123/24-2-01/304 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի «Արթուր Պողոսյան» ԱՁ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ավտոպահեստամասերը (Պայմանագրի 1.1 կետ):

Պայմանագրով սահմանված է.

- Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված 2-ով ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված է՝ «պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում», սակայն Պայմանագրի Հավելված 1-ի 17, 18 և 20-րդ չափաբաժիններով սահմանված բնութագրերով ապրանքները մինչ օրս չեն մատակարարվել:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ ընկերության կողմից միակողմանի մասնակի լուծվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Արթուր Պողոսյան» ԱՁ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-

123/24-2-01/304 պայմանագիրը և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (4 400 ՀՀ դրամ) և որակավորման (6 600 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀԳՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91